

պատասխանէ Երեմիա. «Եւ զի խնդալ հարկիս զի եւ կեղեցի նոր երգօք պայծառանայ, որպէս Շնորհալին նուագէ. Նոր երգս առեալ Նորոգողին: Եւ զի թէ յերգս իմ գտանիցի սխալ ինչ՝ պարտ էր քեզ ուղղել, եւ թէ յեղանակս իցէ թերութիւն՝ հարկ էր քեզ կարգաւորել» (Յաւել. էջ 501): Երեմիա Ազուլեաց Պետրոս արքեպիսկոպոսի գրած թուղթին (Յաւել. էջ 432-3)՝ նաեւ իր Գրիգորիս վարդապետ որդիին գրածին մէջ (Յաւել. էջ 461) կը գանգատի թէ տգէտ նախանձոտներ թոյլ չեն տուած որ ի պատիւ Յակոբ կաթողիկոսի իր յօրինած գանձերը երգէ անոր թաղման օրը գերեմանին վրայ:

Ինչպէս վերեւ ակնարկեցինք՝ նպատակ չունինք Ներածականիս մէջ լիակատար կենսագրութիւնը ընել Երեմիա Չէլչպիի, այլ միայն տալ անոր կեանքի այն գիծերը որոնք թաքուն մնացած էին ցարդ: Ուստի կը շարունակենք՝ չչեղելով մեր ծրագրած ուղղութենէն:

* * *

Իր Օրագրութեան մէջ Երեմիա կը պատմէ իր մօր քեռին՝ Մահտեսի Ամբակումի ու անոր կնոջ հետ ուխտի երթալը Երուսաղէմ, երբ ինք դեռ նոր թեւակոխած էր 13 տարին: Մահտեսի Ամբակում իր այս երկրորդ ուխտագնացութիւնը⁽¹⁾ կը կատարէր Փիլիպպոս կաթողիկոսի փափաքին համաձայն, որ էջմիածինէն մասնաւոր գիրով մը հրաւիրած էր զինք Երուսաղէմ, որպէսզի այնտեղ զիրար տեսնեն ու միասին կատարեն ուխտերնին: Իննսուն հոգիէ բաղկացած ուխտաւորներու խումբը, որուն կ'առաջնորդէր Դարանաղցի

(1) Առաջին անգամ ուխտի գացած էր Գրիգոր Պարոնտէր պատրիարքի օրով 1634 (= 1634) Ծռազատի տարին (Օրագր. էջ 308)։